ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N--- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԽՈՍԵ ԱՐՏԻԳԱՍԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Ուրուգվայի հրապարակում Ուրուգվայի ազգային հերոս Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրմանը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի ---------ի
N-------Ա որոշման

ԵՐԵՎԱՆՈՒՄ, ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԱԶԱՏԱԳՐՈՂ
ԽՈՍԵ ԱՐՏԻԳԱՍԻ ԿԻՍԱՆԴՐԻԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | ԻՐԱՎԻՃԱԿ







ՀԱՏԱԿԱԳԻԾ



ԵՐԵՎԱՆՈՒՄ, ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԱԶԱՏԱԳՐՈՂ ԽՈՍԵ ԱՐՏԻԳԱՍԻ ԿԻՍԱՆԴՐԻԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

I ՃԱԿԱՏՆԵՐ, ԵՌԱՉԱՓ ՏԵՍՔ

ԵՐԵՎԱՆՈՒՄ, ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԱԶԱՏԱԳՐՈՂ
ԽՈՍԵ ԱՐՏԻԳԱՍԻ ԿԻՍԱՆԴՐԻԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ I ԵՌԱՉԱՓ ՏԵՍՔԵՐ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԽՈՍԵ ԱՐՏԻԳԱՍԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Երևանի քաղաքապետին ուղղված ՀՀ արտաքին գործերի նախարարության 06.10.2023 թ. № 1102/52550-23 և արտաքին գործերի նախարարի 20.11.2024 թ. № 1102/61599-24 գրությունները, որով ՀՀ ԱԳ նախարարությունը կարևորում է, Երևան քաղաքի Ուրուգվայի հրապարակում Ուրուգվայի ազգային հերոս Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրման հարցը (նախագիծը՝ հայ ճարտարապետ Էրիկ (Էրզաս) Հովհաննիսյանի):

Կիսանդրու տեղադրման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է ՀՀ-ում Ուրուգվայի դեսպանատունը:

Հայաստանը և Ուրուգվայն ավանդաբար բարեկամ երկրներ են, այս երկրի հետ հարաբերությունները կարևորվում են նաև Հարավային Ամերիկայի այլ պետությունների հետ և տարածաշրջանային բազմակողմ հարթակներում համագործակցության զարգացման տեսանկյունից:

2021թ. նոյեմբերից Երևանում գործում է Ուրուգվայի ռեզիդենտ դեսպանությունը, իսկ 2024թ. մարտից՝ Մոնտեվիդեոյում ՀՀ ռեզիդենտ դեսպանությունը:

Ուրուգվայում գործում է 2 հայկական վարժարան, 1 դպրոց, մշակութային և համայնքային այլ կառույցներ: Երկրում առկա է 8 հայկական հուշարձան, նույն թվով Հայաստանի անունը կրող կամ առնչվող փողոցներ և հրապարակ:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ վերահաստատում ենք, որ ԱԳ նախարարությունը կարևորում է Երևանի Ուրուգվայի հրապարակում Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրումը:

Ուրուգվայի անկախության համար ազգային ազատագրական պայքարի հերոս, քաղաքական գործիչ: Արտիգասը կանգնած է Ուրուգվայի անկախ պետության ստեղծման հիմքերում:

Ծնվել է 1764 թ. հունիսի 19-ին Մոնտեվիդեոյում: Ծագումով Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսից է:

1811թ. ղեկավարել է իսպանական գաղութարարների դեմ Արևելյան ափի (այժմյան Ուրուգվայ) ժողովրդական ապստամբությունը և հաղթանակ տարել:

1815թ. նրա գլխավորած ուրուգվայական հայրենասերների բանակը պարտության է մատնել է Բուենոս Այրեսի կառավարական զորքը, որը ձգտում էր իր գերիշխանությունը հաստատել Արևելյան ափում ևս:

1816–1820թթ. Արտիգասը ղեկավարել է Բրազիլից ներխուժած պորտուգալական և բրազիլական զորքերի դեմ պայքարը, սակայն պարտություն է կրել:

1820թ. անցել է Պարագվայ և մնացել այնտեղ մինչև կյանքի վերջը: Ուրուգվայի ժողովուրդը Արտիգասին մեծարում է որպես ազգային հերոսի: Հերոս է համարվում նաև Արգենտինայում:

Ստացել է «Արևելքի ղեկավար» և «Ազատ ժողովուրդների պաշտպան» կոչումները:

Նրա պատվին կառուցվել են հուշարձաններ՝ Արգենտինայում, Բրազիլում, Կուբայում, Մեքսիկայում և Չիլիում, ինչպես նաև մի շարք եվրոպական երկրներում (Իտալիա, Պորտուգալիա, Նորվեգիա):

Մահացել է 1850թ. սեպտեմբերի 23-ին, Պարագվայում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ